ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 07.06.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 58/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Լոկատոր» ՓԲԸ-ի 19.05.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-58/16 բողոք), Մեծ Մանթաշի գյուղապետարանի 30.05.2016թ. գրությունը և կից փաստաթղթերը և ԳԲԽ-58/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 06.06.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Լոկատոր» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 19.05.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Մեծ Մանթաշի գյուղապետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման և տեղակայման նպատակով կազմակերպվել է «ՄՄԳ ՊԸԱՊՁԲ 16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Բարվա» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ներկայացված բողոքով տեղեկացրել է, որ չնայած նրան, որ «Լոկատոր» ՓԲԸ-ն հանդիսանում է հակակարկտային կայաններ արտադրող ընկերություն, այնուամենայնիվ չի մասնակցել վերոհիշյալ Ընթացակարգին, քանի որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը համապատասխանեցված

էր միայն «Բարվա» ՍՊԸ-ի կողմից արտադրվող հակակարկտային կայանների տեխնիկական բնութագրին, մասնավորապես՝

1. հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է այնպիսի հակակարկտային կայան, որն ***արտադրվում է միայն «Բարվա» ՍՊԸ-ի կողմից***:

2. ***«Մասնագիտական փորձառություն»*** չափանիշով պահանջվել է, որ մասնակիցը պետք է ներկայացնի սույն հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող հակակարկտային կայանի մատակարարման և տեղակայման փորձ, որին կարող են համապատասխանել միայն «Բարվա» ՍՊԸ-ի կողմից արտադրված հակակարկտային կայանները:

3. Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է այնպիսի համապատասխանության սերտիֆիկատ, որը Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և իրացվող ապրանքների համար պարտադիր չէ և այն սերտիֆիկատը, որը տրվում է «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի համաձայն, ավելին է, քան այն միջազգային սերտիֆիկատը, որը պահանջել է Պատվիրատուն:

Այս փաստերը վկայում են այն, որ Պատվիրատուն ցանկանում է ձեռք բերել հակակարկտային կայան՝ արտադրված «Բարվա» ՍՊԸ-ի կողմից, ուստի տեխնիկական բնութագրով պահանջել է միայն «Բարվա» ՍՊԸ-ի կողմից արտադրված «Զենիթ» տեսակի հակակարկտային կայան:

Ընկերությունը, բողոքում մեջբերել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, որի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1. պետք է մրցակցության ***հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար***.

2. չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում ***մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը***.

3. պետք է լինեն ***օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը***...:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն նման տեխնիկական բնութագրով սահմանափակում է հնարավոր մասնակիցների մասնակցությունը Ընթացակարգին՝ նախապատվություն տալով միայն մեկ մասնակցի:

Ընկերությունը, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետը, խնդրել է.

1. կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել կողմերի միջև պայմանագրի կնքման մասին որոշումը:

2. պայմանագիր կնքած լինելու դեպքում՝ հայտարարել «ՄՄԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով ընթացակարգն ապօրինի:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 25.05.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-58/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացուցիչները բողոքը պնդեցին ամբողջությամբ:

2. Մեծ Մանթաշի գյուղապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Մեծ Մանթաշի գյուղապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «Լոկատոր» ՓԲԸ-ի 19.05.2016թ. բողոքի վերաբերյալ 30.05.2016թ. գրությամբ Կենտրոն է ներկայացրել դիրքորոշումը և Ընթացակարգին վերաբերող բոլոր անհարժեշտ փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն գրությամբ հայտնել է, որ հաշվի առնելով բյուջետային միջոցների սղությունը, և որ մեկ անգամ է գնումը կատարվում, երկար տարիների օգտագործման նպատակով, ցանկանում են գնել որակյալ, մարդկային կյանքի համար անվտանգ, հուսալի և ժամանակով փորձված հակակարակտային կայաններ: Պատվիրատուն տեղեկացրել է նաև, որ այդ նպատակով Մեծ Մանթաշի գյուղապետարանի կողմից, Ընթացակարգի գնման առարկայի բնութագիրը կազմելիս, ուսումնասիրվել է Հայաստանի տարբեր մարզերի տարբեր համայնքներում տեղակայված և շահագործվող հակակարակտային կայանները, արդյունքում ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բոլոր մարզերում տեղակայված են «Զենիթ» հակակարակտային կայաններ, որոնք հուսալի են և անվտանգ մարդկային կյանքի համար, ինչպես նաև բացառում են դաշտերում հրդեհների առաջացումը: Տվյալ կայանի շահագործման ընթացքում, կրակի

ժամանակ բոցի արտահոսքը բացառվում է իր տեխնոլոգիական կառուցվածքի շնորհիվ:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ ինչ վերաբերվում է սույն հրավերով պահանջվող սերտիֆիկատին, ապա տվյալ սերտիֆիկատները հավաստում են, որ կայանը աշխատանքի ժամանակ մարդկային կյանքի համար անվտանգ է, ինչը ամենակարևորն է, և կայանի տեխնոլոգիական կառուցվածքի հետ միասին հանդիսանում է գնման առարկայի հատկանիշների անբաժան մասը:

Ինչ վերաբերվում է կայանի հիմքի կառուցմանը, ապա Պատվիրատուն այս կապակցությամբ նշել է, որ տեղում (թաց եղանակով) հիմքի կառուցման համար պահանջվում է փորձաքննություն անցած նախագիծ և տեխնիկական հսկողություն, ինչը հավելյալ ծախս է և բացի դա, չոր եղանակով հիմքի տեղադրումը համարվում է ժամանակավոր կառույց և անհրաժեշտության դեպքում ցանկացած ժամանակ կարելի է տեղափոխել, իսկ բետոնե սալի պարամետրերի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ-ում տեղակայված հակակարկտային կայանների հիմքում դրված է այդպիսի ամբողջական գործարանային արտադրության սալ, որը անհրաժեշտ է կայանի հուսալի աշխատանքի համար:

Ինչ վերաբերվում է նմանատիպ համարվող աշխատանքներին, Պատվիրատուն գրությամբ հայտնել է, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից և հաշվի առնելով օգտագործման հատուկ նշանակությունը և կիրառման վտանգավորությունը՝ գտնում է, որ նմանատիպ կարող է համարվել միայն սույն Ընթացակարգի տեխնիկական բնութագրին համապատասխանող կայանների տեղակայումով մատակարարման աշխատանքները:

Պատվիրատուն 30.05.2016թ. գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Բարվա» ՍՊԸ-ն, որի հետ էլ Պատվիրատուն 19.05.2016թ. կնքել է հակակարկտային կայանների տեղակայումով մատակարարման պետական գնման պայմանագիր:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն նշել է, որ իր կողմից որևիցե արհեստական արգելք չի ստեղծվել գնման գործընթացին որևէ հնարավոր մասնակցի մասնակցության համար, և ամենը օբյեկտիվորեն հիմնավորված է գնման առարկայի առանձնահատկություններից ելնելով, ուստի Պատվիրատուն գտնում է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Մեծ Մանթաշի գյուղապետարանը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ 58/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-58/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-58/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Մեծ Մանթաշի գյուղապետարանի կողմից գյուղապետարանի կարիքների համար հակակարկտային կայանների ձեռքբերման և տեղակայման նպատակով կազմակերպվել է «ՄՄԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

2. Մեծ Մանթաշի գյուղապետարանի կողմից գյուղապետարան կարիքների համար հակակարկտային կայանների ձեռքբերման և տեղակայման նպատակով կազմակերպված «ՄՄԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի 2.3 կետի համաձայն՝

«Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում Մասնակցի՝

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց)

շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: ***Նմանատիպ են համարվում սույն հրավերի N 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրին համապատասխանող հակակարկտային կայանի տեղակայումով մատակարարումը:***

(...)

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

(...)

3. «ՄՄԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Բարվա» ՍՊԸ-ն:

4. **19.05.2016թ**. Մեծ Մանթաշի գյուղապետարանի և «Բարվա» ՍՊԸ-ի միջև կնքվել է հակակարկտային կայանների տեղակայումով մատակարարման պետական գնման պայմանագիր՝ N «ՄՄԳ-ՊԸԱՊՁԲ-16/01»:

4. ԳԲԽ-58/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Լոկատոր» ՓԲԸ-ի 19.05.2016թ. ներկայացրած բողոքը, Մեծ Մանթաշի գյուղապետարանի 30.05.2016թ. գրությունը և կից փաստաթղթերը, Մեծ Մանթաշի գյուղապետարանի կողմից գյուղապետարանի կարիքների համար հակակարկտային կայանների ձեռքբերման և տեղակայման նպատակով կազմակերպված «ՄՄԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ

168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), հայտնում է հետևյալը.

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ ***գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում***:

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը...:

Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև ***գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա***:

Հիմք ընդունելով Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը, Կենտրոնը գտնում է, որ Պատվիրատուն սույն հրավերով հղում անելով միջազգային ստանդարտին, գործել է իրավաչափ:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ «Մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ ***«Մասնագիտական փորձառություն»*** չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

(...)

Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 69-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ ***հրավերով նախատեսված՝ համանման համարվող <u>տնտեսական գործունեության նույն խմբերում</u>:*** Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը: Հրավերով սահմանված՝ համանման համարվող

տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Ուսումնասիրելով Մեծ Մանթաշի գյուղապետարանի կողմից գյուղապետարանի կարիքների համար հակակարկտային կայանների ձեռքբերման և տեղակայման նպատակով կազմակերպված «ՄՄԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը՝ Կենտրոնը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, ինչպես նաև 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի և Կարգի 69-րդ կետի պահանջները:

Մասնավորապես, Ընթացակարգի հրավերի 2.3 կետով սահմանելով, որ ***նմանատիպ են համարվում սույն հրավերի N 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրին համապատասխանող հակակարկտային կայանի տեղակայումով մատակարարումը,*** Պատվիրատուն խախտել է գնումների գործընթացի ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքը, սահմանափակել մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնելով հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, և չի ապահովել մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ Մեծ Մանթաշի գյուղապետարանի և «Բարվա» ՍՊԸ-ի միջև 19.05.2016թ. կնքվել է «ՄՄԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով պայմանագիր, ուստի առաջարկում ենք «Լոկատոր» ՓԲԸ-ի բողոքը բավարարել. «ՄՄԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով ընթացակարգը հայտարարել ապօրինի:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 19.05.2016թ. ներկայացրած բողոքը, Մեծ Մանթաշի գյուղապետարանի 30.05.2016թ. գրությունը՝ կից փաստաթղթերով և ԳԲԽ-58/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 06.06.2016թ. ներկայացրած եզրակացությունը, գտնում է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 19.05.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ ***գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում***:

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը...:

Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև ***գնման առարկայի***

այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Հիմք ընդունելով Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն սույն հրավերով հղում անելով միջազգային ստանդարտին, գործել է իրավաչափ:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ «Մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ ***«Մասնագիտական փորձառություն»*** չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

(...)

Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 69-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ ***հրավերով նախատեսված՝ համանման համարվող <u>տնտեսական գործունեության նույն խմբերում</u>:*** Համանման համարվող տնտեսական

գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Ուսումնասիրելով Մեծ Մանթաշի գյուղապետարանի կողմից գյուղապետարանի կարիքների համար հակակարկտային կայանների ձեռքբերման և տեղակայման նպատակով կազմակերպված «ՄՄԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը՝ Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, ինչպես նաև 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի և Կարգի 69-րդ կետի պահանջները:

Մասնավորապես, Ընթացակարգի հրավերի 2.3 կետով սահմանելով, որ ***նմանատիպ են համարվում սույն հրավերի N 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրին համապատասխանող հակակարկտային կայանի տեղակայումով մատակարարումը,*** Պատվիրատուն խախտել է գնումների գործընթացի ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքը, սահմանափակել մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնելով հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, և չի ապահովել մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

«Լոկատոր» ՓԲԸ-ի 19.05.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. «Մեծ Մանթաշի գյուղապետարանի» կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման և տեղակայման նպատակով կազմակերպված «ՄՄԳ-ՊԸԱՊՁԲ-16/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգը հայտարարել ապօրինի:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝ **Մարտիրոսյան Հարություն**

Գրիգորյան Դիանա